

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ  
МАРЗПЕТАРАН  
АРМАВИРА

0901 ք. ԱՐՄԱՎԻՐ  
ԱՐՈՎՅԱՆ-71  
Հեռ.՝ 0237/2-37-16  
Ֆաքս 010/28-06-46

0901. Г. АРМАВИР  
УЛ. АБОВЯН - 71  
Тел. 0237/ 2 - 37 - 16  
Факс. 010/ 28-06-46

<< 26 >> 05 2015թ. թիվ 01/06/1536-15  
Ձեռք << >> թ. թիվ

<<<ԵՏՔ>> ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ  
ԳՐԻՇԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան << Արմավիրի մարզպետարան հասցեագրած Ձեր 30.04.2015թ. գրության, տեղեկացվում է, որ մարզի ազգաբնակչության շտապ բժշկական օգնությունն իրականացվում է Արմավիրի, Վաղարշապատի, Մեծամորի և Բաղրամյանի տարածքներում գործող 4 շտապ բժշկական օգնության ծառայությունների և 10 գյուղական ամբուլատորիաների միջոցով: Ապահովված են 23 շտապ օգնության ավտոմեքենաներով, 13-ը քաղաքում, 10-ը գյուղերում: Շտապ բժշկական օգնության ծառայություններն ապահովված են բժշկական կադրերով: /Ցանկը կցվում է/:

Այն գյուղական համայնքները, որոնք ունեն շտապ օգնության մեքենաներ, սպասարկում են իրենց ազգաբնակչությանը, մնացած համայնքների ազգաբնակչությունը սպասարկվում է տարաշարժանի բժշկական հաստատության շտապ օգնության ծառայության կողմից: Շտապ օգնության մեքենաները հիմնականում բավարար են:

Քաղաքային համայնքներում կանչը սպասարկվում է մինչև 5-8 րոպեի ընթացքում, իսկ գյուղական վայրերում՝ 15-20 րոպե, կախված հեռավորությունից:

ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության կողմից << առողջապահության նախարարությանը տրամադրված «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագիրը, որում ընդգրկված են նաև << Արմավիրի մարզի շտապ օգնության ծառայությունները, նպատակաուղղված է բարելավելու շտապ բուժօգնության ծառայությունները՝ ՇՕ ոեսուրսների պլանավորման և կառավարման, մշտադիտարկման համակարգի ներդրման, հանրային իրազեկվածության բարձրացման միջոցով: Շտապ օգնության տեղեկատվական վերլուծական համակարգը հնարավորություն կտա ավտոմատացնել տվյալների հոսքը շտապ օգնության կայանների և

գործակարգավարական համակարգի միջև: Համակարգի շնորհիվ կիրականացվի տեղեկատվության արագ փոխանցում, կստեղծվի տվյալների կենտրոնացված բազա ու կներդրվի մշտադիտարկման համակարգ:

Շտապ օգնության մեքենաները համալրվել են GPS տեղորոշման և մոնիտորինգի համակարգով, որի կիրառման շնորհիվ կբարձրանա շտապօգնության ծառայության աշխատանքի որակը, մասնավորապես կկրճատվի ստացված կանչին արձագանքելու ժամանակը, առավել կառավարելի կդառնա տրանսպորտային պարկի ղեկավարումը դիսպետչերի կողմից:

Միաժամանակ հայտնվում է, որ Չինաստանի ժողովրդական հանրապետության կառավարության կողմից նվիրաբերված շտապ օգնության գծային մեքենաների, շտապ օգնության ռեանիմոբիլների նվիրաբերման արդյունքում կհամալրվեն մարզի շտապ օգնության ծառայությունները:

Առդիր 1 թերթ:

ՄԱՐԶՊԵՏ՝

Կատ՝ Լ. Մուրադյան  
Ծ. Գրիգորյան



Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ